



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

30.11.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/86

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի
դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՍՕՍ սիսթեմս» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Ծատուրյանի (պետական ռեգիստրի գրացման
համար՝ 286.110.66971),

«ՍՕՍ սիսթեմս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 11.11.2021թ.),

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ

Հ. Հարությունյանի (լիազորագիր՝ տրված 17.11.2021թ.),

Ա. Եղոյանի (լիազորագիր՝ տրված 17.11.2021թ.),

Ա. Մովսեսյանի (լիազորագիր՝ տրված 17.11.2021թ.),

քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ազդարարման համակարգի
հեռահար կառավարման բլոկի /տեղադրումով և կարգաբերումով/ և ձայնային
ազդանշանային էլեկտրոշչակի /տեղադրումով և կարգաբերումով/ ձեռքբերման
նպատակով հայտարարված «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման
ընթացակարգի շրջանակներում «ՍՕՍ սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից 10.11.2021թ.
ներկայացված (11.11.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-
2021/86 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ՍՕՍ սիսթեմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՍՕՍ սիսթեմ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 10.11.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկի /տեղադրումով և կարգաբերումով/ և ձայնային ազդանշանային էլեկտրոնային /տեղադրումով և կարգաբերումով/» ձեռքբերման նմատակով հայտարարվել է «ԵԲ-ԳՀԱՊԶԲ-22/1» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2021թ. նոյեմբերի 11-ը:

Ընթացակարգի հրավերի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Երևանի քաղաքապետարանի» կարիքների համար՝ «Ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկի /տեղադրումով և կարգաբերումով/ և ձայնային ազդանշանային էլեկտրոնային /տեղադրումով և կարգաբերումով/» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «2» չափաբաժիներում՝

<i>Չափաբաժինների համարները</i>	<i>Չափաբաժնի անվանումը</i>
1	Ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկ
2	Ձայնային ազդանշանային էլեկտրոնային /միաֆազ/

Ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Հազար դրամ

Ապրանքի								
Զ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Զ/Մ	Միավոր գինը	Ընդհանուր գինը	Ընդհանուր քանակը	Մատակարարման	
							Հասցեն	Ժամկետը
1.	42961100	Ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկ	հատ			218	Արգիշտիի 1	Նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում

2.	35121110	Ձայնային ազդանշանային էլեկտրոնային /միաֆազ/	հաստ			30	Արգիշտիի 1	Նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում
----	----------	---	------	--	--	----	------------	---

Վերոնշյալ ապրանքների գնման դեպքում մասնակիցների կողմից անհրաժեշտ է նշել ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվությունը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին 1

1. Ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկ (էլեկտրոնային հեռահար կառավարման համակար)՝ /տեղադրումով և կարգաբերումով/

Հիմնական ֆունկցիոնալ պահանջներ՝

Օպերատորի հրամանով՝

Ազդանշանի հեռահար ակտիվացում և ապասկտիվացում հետևյալ կապի տեսակներով՝

- GSM կապի միջոցով՝ զանգով և SMS հաղորդագրությամբ
- Համացանցի միջոցով՝ լարային՝ Ethernet և անլար՝ GPRS (VPN ցանցում աշխատելու հնարավորություն ստատիկ IP-ով)

Ազդարարման հնարավորություն՝ առանց որևէ կապի միջոց օգտագործելու՝ անմիջապես բլոկի վրա տեղադրված կոճակներով. Կոճակը սեղմելով ազդարարումը կատարվում է ավտոմատ կերպով

Սարքի խափանման դեպքում ազդարարման հնարավորություն՝ մեխանիկական կերպով, սարքի վրա տեղադրված ֆիքսվող անջատիչով

Կուտակիչային մարտկոց՝ ցանցի խափանման դեպքում սարքի հետ կապ պահպանելու համար

Կարգավորման հնարավորություն՝ համակարգչի օգնությամբ

Շչակի ակտիվացման և ապասկտիվացման վերաբերյալ տեղեկատվության պահպանում և հաղորդում սերվերին

Կառավարման բլոկը պետք է ապահովի Երևան քաղաքում արդեն տեղադրված և գործող «C - 40, C - 40c, C - 28, C30-2» և այլ համարժեք մոդելների շչակների կառավարումը

Կառավարման բլոկի վիճակի վերաբերյալ տեղեկատվության դիտարկման

հնարավորություն (ֆազերի կորստի, լարման, փոխատեղման և մարտկոցի լարման):

- սնուցող ցանցի նոմինալ լարումը՝ 220Վ
- Կառավարման բլոկը պետք է ապահովի եռաֆազ և միաֆազ շչակների

կառավարումը:

- Կառավարման բլոկի ծրագրային թարմացումների հնարավորություն:
- Երկարացվող անտենա՝ անլար կապի որակի լավարկման համար:
- Առնվազն 2 տեսակի ազդարարման հնարավորություն (առանց վերածրագրավորման

/վերակարգավորման):

Սարքը պետք է ապահովի հրամանների նվազագույն ցանկ՝

- Ուշադրություն բոլորին (չընդհատվող ազդանշան)
- Օդային տազնապ (ընդհատումներով ազդանշան)
- Ազդարարման անջատում
- Սարքի վիճակի վերաբերյալ հարցում

Սարքի լրակազմը՝

Կառավարման բլոկ՝

- Հիմնական տպասալ
- Ավտոմատ անջատիչ՝ առնվազն C 25
- Մեխանիկական կոնտակտոր 18-22 Ա
- Անխափան սնուցման բլոկ
- Կուտակչային մարտկոց 12 Վ, 1.2 Ա*ժ

1. 5x2.5 մմ² պղնձե հաղորդալար առնվազն 200 սմ

2. 4x2.5 մմ² պղնձե հաղորդալար առնվազն 200 սմ

3. Երկարացվող GSM ալեհավաք՝ առնվազն 180 սմ երկարությամբ

4. UTP հաղորդալար միակցիչներով առնվազն 200 սմ երկարությամբ

Բլոկի արտաքին չափսերի և քաշին և այլնին վերաբերող պահանջներ

1. Երկարություն՝ մինչև -80 սմ

2. Լայնություն՝ մինչև -50 սմ

3. Խորություն՝ մինչև -40 սմ

4. Քաշ՝ մինչև -15 կգ

5. Նյութ՝ մետաղական

6. Ներկ՝ փոշեներկված

7. Պաշտպանվածությունը՝ IP 65:

Տեղադրման պահանջներ՝

- Սարքն անհրաժեշտ է տեղադրել 1.5–2մ՝ մարդու համար հասանելի բարձրությամբ:
- Նախքան հաղորդալարերի միացումը ստուգել ֆազերի հերթականությունը և

համապատասխանությունը նոմինալին:

- Ֆազերը միացնել այնպես, որ ելքերի և մուտքերի հերթականությունները համապատասխանեն միմյանց:

- Սարքը պետք է ունենա հողանցում ապահովող սեղմակ:

• Տեղադրում (Տեղադրումը իր մեջ ներառում է՝ մալուխների անցկացում և միացում էլեկտրական վահանակին և էլեկտրաշչակի հեռահար կառավարման վահանակին)

- տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ՝ մալուխներ, անջատիչներ.

• Տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ (անհրաժեշտ պարագաները իր մեջ ներառում են՝ մալուխներ, ամրացման համար անհրաժեշտ պարագաներ՝ պտուտակ, բոլտ, շայբա, մալուխների համար նախատեսված ամրակներ, անհրաժեշտության դեպքում կոնստրուկցիաների՝ ոտնակի կամ այլ հարմարանքի պատրաստում, տեղադրման վայրի GPS կորդինատի տեղորոշում, տեղադրված էլեկտրաշչակի լուսանկարում 2-3 հատ

Կարգաբերում և միացում կենտրոնական համակարգին

Սարքը ցանցին միացնելուց հետո տեղադրել տրամադրված երկու SIM քարտերը, միացնել մալուխային LAN կապը:

Ստուգել կապի առկայությունը (SIM1, SIM2, LAN):

Սարքը կարգաբերել, ստուգել սարքի աշխատանքը:

Մատակարարը պետք է Երևանի քաղաքապետարանին տրամադրի սարքի և սերվերի միջև տվյալների փոխանակման պրատակոլը՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունում գործող կենտրոնացված ազդարարման համակարգին միացնելու համար:

Բոլոր չափաբաժինների համար երաշխիքը առնվազն 1 տարի:

Չափաբաժին 2

2. Ձայնային ազդանշանային էլեկտրոշչակ՝ C-40c կամ համարժեք մոդելի /տեղադրումով և կարգաբերումով/

	Տեխնիկական բնութագիր	չափիչներ
1.	Ձայնային ճնշման մակարդակը շշակի հեռավորության վրա, ԴԲ, ոչ պակասառանցքից մեկ մետր	120+2%
2.	Ձայնային տատանումների հաճախականությունը, հերց	400-500
3.	Մնուցող ցանցի նոմինալ հաճախականությունը, հերց	50
4.	Մնուցող ցանցի նոմինալ լարումը, Վ	220+/-10%
5.	Պոտոման նոմինալ հաճախականությունը, պտ/րոպ	3000
6.	Ծավալային չափսեր, մմ., ոչ ավել Բարձրություն Տրամագիծ	540 740
7.	Քաշ, կգ., ոչ ավել	70
8.	Երաշխիք առնվազն	1 տարի
9.	Տեղադրում (Տեղադրումը իր մեջ ներառում է՝ մալուխների անցկացում և միացում էլեկտրական վահանակին և էլեկտրաշչակի հեռահար կառավարման վահանակին)	
10.	Տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ (անհրաժեշտ պարագաները իր մեջ ներառում են՝ մալուխներ, ամրացման համար անհրաժեշտ պարագաներ՝ պտուտակ, բոլտ, շայբա, մալուխների համար նախատեսված ամրակներ, անհրաժեշտության դեպքում կոնստրուկցիաների՝ ոտնակի կամ այլ հարմարանքի պատրաստում, տեղադրման վայրի GPS կորդինատի տեղորոշում, տեղադրված էլեկտրաշչակի լուսանկարում 2-3 հատ	

• Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

- 1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

- 2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

- 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

- 4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Ինչպես արդեն նշել ենք, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկի /տեղադրումով և կարգաբերումով/ և ձայնային ազդանշանային էլեկտրոնային /տեղադրումով և կարգաբերումով/» ձեռքբերման նմատակով հայտարարվել է «ԵԲ-ԳՀԱՊԶԲ-22/1» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակար, որի տեխնիկական բնութագիրը կազմվել է ուղղորդված ընկերության համար, քանի որ ըստ տեխնիկական բնութագրի ղեկավարման վահանակները պետք է ղեկավարվեն ԱԻՆ-ի կողմից, իսկ ԱԻՆ-ում արդեն տեղադրված է համակարգ, որով այս սարքավորումները չեն կարող ղեկավարվել:

Իսկ, եթե ըստ այս մրցույթի նախատեսվում է տեղադրել նոր սերվեր և նոր ծրագրային ապահովում, ապա մրցույթը պետք է հայտարարվեր ոչ թե սարքավորումների համար, այլ առաջին հերթին ղեկավարման համակարգի և դրա ծրագրային ապահովման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է ՀՀ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, մասնավորապես՝ Օրենքի 3-րդ, 7-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է Պարտավորեցնել «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Ընկերության տնօրենը և ներկայացուցիչը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.11.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել են նիստին և պնդել վերը շարադրված բողոքը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Երևանի քաղաքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 17.11.2021թ թիվ 02/09-28415 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ սույն թվականի նոյեմբերի 3-ին Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարվել է «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկի (տեղադրումով և կարգաբերումով) և

ձայնային ազդանշանային էլեկտրոնային (տեղադրումով և կարգաբերումով) գնման ընթացակարգ (այսուհետ՝ գնման ընթացակարգ):

Գնման առարկայի ձեռքբերումը կապված է հետևյալով.

Երևանի քաղաքապետարանը իրականացնում է շշակների և հեռահար կառավարման վահանակների ձեռքբերման, տեղադրման և դրանց ընթացիկ սպասարկման աշխատանքները, իսկ շշակների շահագործումն իրականացվում է ՀՀ ԱԻ նախարարությունը: Հետևաբար՝ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում միևնույն ցանցով կենտրոնացված ազդարարումը և ղեկավարումը իրականացնելու համար հաշվի է առնվել ՀՀ-ում արդեն իսկ գործող կենտրոնացված ազդարարման համակարգերի սարքավորումների տեխնիկական հնարավորությունները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ գնման ընթացակարգին մասնակցել են թվով երեք ընկերություններ, այդ թվում նաև բողոքաբերը՝ «ՍՕՍ սիսթեմս» ՍՊԸ-ն, ինչը փաստում է, որ ղեկավարվելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի պահանջներով՝ գնման առարկայի բնութագրերը սահմանվել են այնպես, որ դրանք բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների:

Գնման ընթացակարգին «ՍՕՍ սիսթեմս» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմել է 14400000 ՀՀ դրամ, ինչը ևս փաստում է այն մասին, որ տվյալ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը չեն կազմվել ուղղորդված որևէ ընկերության համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.11.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը նիստին, ովքեր իրենց հերթին հայտնել են հետևյալը.

«Ազդարարումն իրականացնում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը ընդամենը գնում է սարքը և հանձնում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը, Երևանի քաղաքապետարանը կարող է իրականացնել նաև ընթացիկ սպասարկում, բայց բողոքաբերը մի քանի անգամ նշեց, որ քաջատեղյակ է, թե ինչ սարքով է աշխատում ՀՀ ԱԻՆ-ը, այսինքն՝ դա գաղտնիք չէ, այսինքն առանց այդ հղման էլ, բողոքաբերը արդեն իսկ ծանոթ է:

Ինչ վերաբերում է սարքի ոչ պրոֆեսիոնալ լինելուն, ապա նման պարամետրերով աշխատող հեռահար կառավարման համակարգ արդեն գոյություն ունի, ՀՀ ԱԻՆ-ը

աշխատում է դրանով, մենք վերցրել ենք ինչ հնարավոր է, ավելացրել ենք ինչ-որ բաներ, որ մենք ունենանք ավելի լավը: SIM 1, SIM 2-ը նրա համար է, որ մեկ օպերատորի շարքից դուրս գալու դեպքում մենք կարողանանք ազդանշան ուղարկել մյուսով: Ինչ վերաբերում է UPS-ին՝ տարբեր հեռակառավարման համակարգեր ունեն UPS սարք, որը հոսանք չլինելու պայմաններում ունի հնարավորություն ազդարարման կառավարման բլոկը աշխատացնելու համար»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցին, արդյոք Ընթացակարգը հայտարարելիս և տեխնիկական բնութագիրը սահմանելիս ուսումնասիրվել է թե իրականության մեջ գոյություն ունի սարք, որը բավարարում է այս տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և միևնույն ժամանակ համակցված է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում տեղադրված համակարգին, պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց հետևյալը.

«ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը նամակ ենք գրել, որ մեզ տրամադրեն տեխնիկական բնութագրեր, որին ի պատասխան մեզ տրամադրել են մոտավոր տեխնիկական բնութագրեր, մենք փորձել ենք ավելի շատ տեղեկատվություն ունենալ տարբեր տեղերից, բայց խնդրել են, որ սարքը հնարավոր լինի կցել իրենց ցանցին և աշխատացնել, այդ սերվերին միացնելն արդեն մեր խնդիրը չէ, դա ՀՀ ԱԻՆ-ի խնդիրն է:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցին, արդյոք կարող են այս պահին կամ գրությամբ պնդել կամ ներկայացնել մեկ սարք, որը ուսումնասիրվել է գնման հայտը կազմող պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցչի կողմից և համապատասխանում է տեխնիկական բնութագրին, այսինքն գոյություն ունի այս տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին համապատասխան գոնե մեկ սարք, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց հետևյալը.

«Մենք գրել ենք, որ կառավարման բլոկը պետք է ապահովի C-40, C-40c, C-28, C30-2 տիպի շչակների կառավարումը, շչակները մի տիպի չեն, Երևան քաղաքում տեղադրված տարբեր շչակներ կան»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ընդգծեց, որ հարցը տալիս է, քանի որ եթե Պատվիրատուն նշում է որոշակի ֆիզիկական տվյալներ, առնվազն որոշակի ապրանքների շրջանակ ունեցել է, եթե գրում է բլոկի արտաքին չափս և քաշը մինչև 15կգ, այսինքն՝ Դուք որոշակի պատկերացում արդեն իսկ ունեք, այսինքն Դուք ունեք որոշակի ապրանքների ցանկ և այն ապրանքների ցանկը, որ Դուք որպես հնարավոր տարբերակ

քննարկել եք արդյոք բավարարում է այդ տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Այս մասով Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց հետևյալը.

«Մենք ունենք մի քանի տեսակի սարքեր, որոնք ունեն մեզ անհրաժեշտ պարամետրերը, սկսում են 3կգ-ից վերջանում է 15կգ-ով, մենք նշել ենք մինչև 15կգ, չենք նշել հենց 15կգ, մենք ուսումնասիրել ենք և պարզել որ լինում են մինչև 15կգ, և դրանք բավարարում են տեխնիկական բնութագրով սահմանված պահանջները»:

Պատվիրատուի ներկայացուցիչը ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պահանջի պարտավորվեց ներկայացնել թե որոնք են այդ սարքերը, որոնք բավարարում են տեխնիկական բնութագրով սահմանված պահանջները, ինչպես նաև ներկայացնել տեղեկատվություն, թե ուսումնասիրության արդյունքում ինչպես են հավաստվել, որ այդ սարքերը կարող են համակցվել ՀՀ ԱԻՆ-ում տեղադրված սերվերին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցին, ինչ խնդիր է լուծում կուտակչային մարտկոցը, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ կուտակչային մարտկոցը, նախատեսված է կառավարման բլոկի համար, իսկ շշակի համար էլ կարող են հետագայում նախատեսել երկրորդային սնուցման աղբյուր, որ հոսանքը ինչ-որ մի տեղ չլինի, կառավարման բլոկը UPS-ի միջոցով ունենա հոսանք ու երկրորդային սնուցման աղբյուրով էլ կարողանա կառավարումն իրականացնի»:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/86 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/86 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկի /տեղադրումով և կարգաբերումով/ և ձայնային ազդանշանային էլեկտրոշշակի /տեղադրումով և կարգաբերումով/ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Ապրանքի									
Չ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Չ/Մ	Միավոր գինը	Ընդհանուրգինը	Ընդհանուրքանակը	Անվանումը	Մատակարարման	
								Հասցեն	Ժամկետը
1	42961100	Ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկ	ստ			218	Արգիշտիի 1	Նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում	
2	35121110	Ձայնային ազդանշանային էլեկտրոշակ /միաֆազ/	ստ			30	Արգիշտիի 1	Նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում	

Վերոնշյալ ապրանքների գնման դեպքում մասնակիցների կողմից անհրաժեշտ է նշել ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվությունը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին 1

1. Ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկ (էլեկտրոշակի հեռահար կառավարման համակար)՝ /տեղադրումով և կարգաբերումով/

Հիմնական ֆունկցիոնալ պահանջներ՝

Օպերատորի հրամանով՝

Ազդանշանի հեռահար ակտիվացում և ապասկտիվացում հետևյալ կապի տեսակներով՝

- GSM կապի միջոցով՝ զանգով և SMS հաղորդագրությամբ
- Համացանցի միջոցով՝ լարային՝ Ethernet և անլար՝ GPRS (VPN ցանցում աշխատելու հնարավորություն ստատիկ IP-ով)
- Ազդարարման հնարավորություն՝ առանց որևէ կապի միջոց օգտագործելու՝ անմիջապես բլոկի վրա տեղադրված կոճակներով. Կոճակը սեղմելով ազդարարումը կատարվում է ավտոմատ կերպով
- Սարքի խափանման դեպքում ազդարարման հնարավորություն՝ մեխանիկական կերպով, սարքի վրա տեղադրված ֆիքսվող անջատիչով

- Կուտակիչային մարտկոց՝ ցանցի խափանման դեպքում սարքի հետ կապ պահպանելու համար

- Կարգավորման հնարավորություն՝ համակարգչի օգնությամբ

- Շչակի ակտիվացման և ապասկտիվացման վերաբերյալ տեղեկատվության պահպանում և հաղորդում սերվերին

- Կառավարման բլոկը պետք է ապահովի Երևան քաղաքում արդեն տեղադրված և գործող «С - 40, С - 40с, С - 28, С30-2» և այլ համարժեք մոդելների շչակների կառավարումը

- Կառավարման բլոկի վիճակի վերաբերյալ տեղեկատվության դիտարկման հնարավորություն (ֆազերի կորստի, լարման, փոխատեղման և մարտկոցի լարման):

- սնուցող ցանցի նոմինալ լարումը՝ 220Վ

- Կառավարման բլոկը պետք է ապահովի եռաֆազ և միաֆազ շչակների կառավարումը:

- Կառավարման բլոկի ծրագրային թարմացումների հնարավորություն:

- Երկարացվող անտենա՝ անլար կապի որակի լավարկման համար:

- Առնվազն 2 տեսակի ազդարարման հնարավորություն (առանց վերածրագրավորման/վերակարգավորման):

Սարքը պետք է ապահովի հրամանների նվազագույն ցանկ՝

- Ուշադրություն բոլորին (չընդհատվող ազդանշան)

- Օդային տազնապ (ընդհատումներով ազդանշան)

- Ազդարարման անջատում

- Սարքի վիճակի վերաբերյալ հարցում

Սարքի լրակազմը՝

Կառավարման բլոկ՝

- Հիմնական տպասալ

- Ավտոմատ անջատիչ՝ առնվազն С 25

- Մեխանիկական կոնտակտոր 18-22 Ա

- Անխափան սնուցման բլոկ

- Կուտակիչային մարտկոց 12 Վ, 1.2 Ա*ժ

5. 5x2.5 մմ2 պղնձե հաղորդալար առնվազն 200 սմ

6. 4x2.5 մմ2 պղնձե հաղորդալար առնվազն 200 սմ

7. Երկարացվող GSM ալեհավաք՝ առնվազն 180 սմ երկարությամբ
8. UTP հաղորդալար միակցիչներով առնվազն 200 սմ երկարությամբ
- Բլոկի արտաքին չափսերի և քաշին և այլնին վերաբերող պահանջներ
8. Երկարություն՝ մինչև -80 սմ
9. Լայնություն՝ մինչև -50 սմ
10. Խորություն՝ մինչև -40 սմ
11. Քաշ՝ մինչև -15 կգ
12. Նյութ՝ մետաղական
13. Ներկ՝ փոշեներկված
14. Պաշտպանվածությունը՝ IP 65:

Տեղադրման պահանջներ՝

- Սարքն անհրաժեշտ է տեղադրել 1.5–2մ՝ մարդու համար հասանելի բարձրությամբ:
- Նախքան հաղորդալարերի միացումը ստուգել ֆազերի հերթականությունը և

համապատասխանությունը նոմինալին:

- Ֆազերը միացնել այնպես, որ ելքերի և մուտքերի հերթականությունները

համապատասխանեն միմյանց:

- Սարքը պետք է ունենա հողանցում ապահովող սեղմակ:
- Տեղադրում (Տեղադրումը իր մեջ ներառում է՝ մալուխների անցկացում և միացում էլեկտրական վահանակին և էլեկտրաշչակի հեռահար կառավարման վահանակին)
- տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ՝ մալուխներ, անջատիչներ.
- Տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ (անհրաժեշտ պարագաները իր մեջ

ներառում են՝ մալուխներ, ամրացման համար անհրաժեշտ պարագաներ՝ պտուտակ, բոլտ, շայթա, մալուխների համար նախատեսված ամրակներ, անհրաժեշտության դեպքում կոնստրուկցիաների՝ ոտնակի կամ այլ հարմարանքի պատրաստում, տեղադրման վայրի GPS կորդինատի տեղորոշում, տեղադրված էլեկտրաշչակի լուսանկարում 2-3 հատ

Կարգաբերում և միացում կենտրոնական համակարգին

Սարքը ցանցին միացնելուց հետո տեղադրել տրամադրված երկու SIM քարտերը, միացնել մալուխային LAN կապը:

Ստուգել կապի առկայությունը (SIM1, SIM2, LAN):

Սարքը կարգաբերել, ստուգել սարքի աշխատանքը:

Մատակարարը պետք է Երևանի քաղաքապետարանին տրամադրի սարքի և սերվերի միջև տվյալների փոխանակման պրատակոլը՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունում գործող կենտրոնացված ազդարարման համակարգին միացնելու համար:

Բոլոր չափաբաժինների համար երաշխիքը առնվազն 1 տարի:

Չափաբաժին 2

2.Ձայնային ազդանշանային էլեկտրոշակ՝ C-40c կամ համարժեք մոդելի /տեղադրումով և կարգաբերումով/

	Տեխնիկական բնութագիր	Չափիչներ
1	Ձայնային ճնշման մակարդակը շչակի հեռավորության վրա, ԴԲ, ոչ պակասառանցքից մեկ մետր	120+2%
	Ձայնային տատանումների հաճախականությունը, հերց	400-500
3	Մնուցող ցանցի նոմինալ հաճախականությունը, հերց	50
4	Մնուցող ցանցի նոմինալ լարումը, Վ	220+/-10%
5	Պոտման նոմինալ հաճախականությունը, պտ/րոպ	3000
6	Ծավալային չափսեր, մմ., ոչ ավել Բարձրություն Տրամագիծ	540 740
7	Քաշ, կգ., ոչ ավել	70
8	Երաշխիք առնվազն	1 Տարի
9	Տեղադրում (Տեղադրումը իր մեջ ներառում է՝ մալուխների անցկացում և միացում էլեկտրական վահանակին և էլեկտրաշչակի հեռահար կառավարման վահանակին)	
10	Տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ (անհրաժեշտ պարագաները իր մեջ ներառում են՝ մալուխներ, ամրացման համար անհրաժեշտ պարագաներ՝ պտուտակ, բոլտ, շայթա, մալուխների համար նախատեսված ամրակներ, անհրաժեշտության դեպքում կոնստրուկցիաների՝ ոտնակի կամ այլ հարմարանքի պատրաստում, տեղադրման վայրի GPS կորդինատի տեղորոշում, տեղադրված էլեկտրաշչակի լուսանկարում 2-3 հատ	

3. Պատվիրատուի ներկայացուցիչը ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պահանջի պարտավորվել է ներկայացնել թե որոնք են այդ սարքերը, որոնք բավարարում են տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացնել տեղեկատվություն, թե ուսումնասիրության արդյունքում ինչպես են հավաստվել, որ այդ սարքերը կարող են համակցվել ՀՀ ԱԻՆ-ում տեղադրված սերվերին, սակայն չի ներկայացրել:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՍՕՍ սիսթեմս» ՍՊԸ-ի 10.11.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, Երևանի քաղաքապետարանի դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառությանին (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էքզիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է

բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Այսպես՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկի /տեղադրումով և կարգաբերումով/ և ձայնային ազդանշանային էլեկտրոշակի /տեղադրումով և կարգաբերումով/ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Ապրանքի									
Չ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Չ/Մ	Միավոր գինը	Ընդհանուրգինը	Ընդհանուրքանակը	Անվանումը	Մատակարարման	
								Հասցեն	Ժամկետը
1	42961100	Ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկ	ատ			218	Արգիշտիի 1	Նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում	
2	35121110	Ձայնային ազդանշանային էլեկտրոշակի /միաֆազ/	ատ			30	Արգիշտիի 1	Նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում	

Վերոնշյալ ապրանքների գնման դեպքում մասնակիցների կողմից անհրաժեշտ է նշել ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվությունը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին 1

2. Ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկ (էլեկտրոշակի հեռահար կառավարման համակար)՝ /տեղադրումով և կարգաբերումով/

Հիմնական ֆունկցիոնալ պահանջներ՝

Օպերատորի հրամանով՝

Ազդանշանի հեռահար ակտիվացում և ապասկտիվացում հետևյալ կապի տեսակներով՝

- GSM կապի միջոցով՝ զանգով և SMS հաղորդագրությամբ
 - Համացանցի միջոցով՝ լարային՝ Ethernet և անլար՝ GPRS (VPN ցանցում աշխատելու հնարավորություն ստատիկ IP-ով)
 - Ազդարարման հնարավորություն՝ առանց որևէ կապի միջոց օգտագործելու՝ անմիջապես բլոկի վրա տեղադրված կոճակներով. Կոճակը սեղմելով ազդարարումը կատարվում է ավտոմատ կերպով
 - Սարքի խափանման դեպքում ազդարարման հնարավորություն՝ մեխանիկական կերպով, սարքի վրա տեղադրված ֆիքսվող անջատիչով
 - Կուտակիչային մարտկոց՝ ցանցի խափանման դեպքում սարքի հետ կապ պահպանելու համար
 - Կարգավորման հնարավորություն՝ համակարգչի օգնությամբ
 - Շչակի ակտիվացման և ապասկտիվացման վերաբերյալ տեղեկատվության պահպանում և հաղորդում սերվերին
 - Կառավարման բլոկը պետք է ապահովի Երևան քաղաքում արդեն տեղադրված և գործող «C - 40, C - 40c, C - 28, C30-2» և այլ համարժեք մոդելների շչակների կառավարումը
 - Կառավարման բլոկի վիճակի վերաբերյալ տեղեկատվության դիտարկման հնարավորություն (ֆազերի կորստի, լարման, փոխատեղման և մարտկոցի լարման):
 - սնուցող ցանցի նոմինալ լարումը՝ 220Վ
 - Կառավարման բլոկը պետք է ապահովի եռաֆազ և միաֆազ շչակների կառավարումը:
 - Կառավարման բլոկի ծրագրային թարմացումների հնարավորություն:
 - Երկարացվող անտենա՝ անլար կապի որակի լավարկման համար:
 - Առնվազն 2 տեսակի ազդարարման հնարավորություն (առանց վերածրագրավորման/վերակարգավորման):
- Սարքը պետք է ապահովի հրամանների նվազագույն ցանկ՝
- Ուշադրություն բոլորին (չընդհատվող ազդանշան)
 - Օդային տազնապ (ընդհատումներով ազդանշան)
 - Ազդարարման անջատում

- Սարքի վիճակի վերաբերյալ հարցում

Սարքի լրակազմը՝

Կառավարման բլոկ՝

- Հիմնական տպասալ
- Ավտոմատ անջատիչ՝ առնվազն C 25
- Մեխանիկական կոնտակտոր 18-22 Ա
- Անխափան սնուցման բլոկ
- Կուտակչային մարտկոց 12 Վ, 1.2 Ա*ժ

9. 5x2.5 մմ² պղնձե հաղորդալար առնվազն 200 սմ

10. 4x2.5 մմ² պղնձե հաղորդալար առնվազն 200 սմ

11. Երկարացվող GSM ալեհավաք՝ առնվազն 180 սմ երկարությամբ

12. UTP հաղորդալար միակցիչներով առնվազն 200 սմ երկարությամբ

Բլոկի արտաքին չափսերի և քաշին և այլնին վերաբերող պահանջներ

15. Երկարություն՝ մինչև -80 սմ

16. Լայնություն՝ մինչև -50 սմ

17. Խորություն՝ մինչև -40 սմ

18. Քաշ՝ մինչև -15 կգ

19. Նյութ՝ մետաղական

20. Ներկ՝ փոշեներկված

21. Պաշտպանվածությունը՝ IP 65:

Տեղադրման պահանջներ՝

- Սարքն անհրաժեշտ է տեղադրել 1.5–2մ՝ մարդու համար հասանելի բարձրությամբ:

- Նախքան հաղորդալարերի միացումը ստուգել ֆազերի հերթականությունը և համապատասխանությունը նոմինալին:

- Ֆազերը միացնել այնպես, որ ելքերի և մուտքերի հերթականությունները համապատասխանեն միմյանց:

- Սարքը պետք է ունենա հողանցում ապահովող սեղմակ:

- Տեղադրում (Տեղադրումը իր մեջ ներառում է՝ մալուխների անցկացում և միացում էլեկտրական վահանակին և էլեկտրաշչակի հեռահար կառավարման վահանակին)

- տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ՝ մալուխներ, անջատիչներ.

- Տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ (անհրաժեշտ պարագաները իր մեջ

ներառում են՝ մալուխներ, ամրացման համար անհրաժեշտ պարագաներ՝ պտուտակ, բոլտ, շայբա, մալուխների համար նախատեսված ամրակներ, անհրաժեշտության դեպքում կոնստրուկցիաների՝ ոտնակի կամ այլ հարմարանքի պատրաստում, տեղադրման վայրի GPS կորդինատի տեղորոշում, տեղադրված էլեկտրաշչակի լուսանկարում 2-3 հատ

Կարգաբերում և միացում կենտրոնական համակարգին

Սարքը ցանցին միացնելուց հետո տեղադրել տրամադրված երկու SIM քարտերը, միացնել մալուխային LAN կապը:

Ստուգել կապի առկայությունը (SIM1, SIM2, LAN):

Սարքը կարգաբերել, ստուգել սարքի աշխատանքը:

Մատակարարը պետք է Երևանի քաղաքապետարանին տրամադրի սարքի և սերվերի միջև տվյալների փոխանակման պրատակուր՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունում գործող կենտրոնացված ազդարարման համակարգին միացնելու համար:

Բոլոր չափաբաժինների համար երաշխիքը առնվազն 1 տարի:

Չափաբաժին 2

2.Ձայնային ազդանշանային էլեկտրոշչակ՝ C-40c կամ համարժեք մոդելի /տեղադրումով և կարգաբերումով/

	Տեխնիկական բնութագիր	Չափիչներ
1	Ձայնային ճնշման մակարդակը շչակի հեռավորության վրա, ԴԲ, ոչ պակասառանցքից մեկ մետր	120+2%
	Ձայնային տատանումների հաճախականությունը, հերց	400-500
3	Մնուցող ցանցի նոմինալ հաճախականությունը, հերց	50
4	Մնուցող ցանցի նոմինալ լարումը, Վ	220+/-10%
5	Պտտման նոմինալ հաճախականությունը, պտ/րոպ	3000
6	Ծավալային չափսեր, մմ., ոչ ավել Բարձրություն Տրամագիծ	540 740
7	Քաշ, կգ., ոչ ավել	70
8	Երաշխիք առնվազն	2 Տարի
9	Տեղադրում (Տեղադրումը իր մեջ ներառում է՝ մալուխների անցկացում և միացում էլեկտրական վահանակին և էլեկտրաշչակի հեռահար կառավարման վահանակին)	
10	Տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ (անհրաժեշտ պարագաները իր մեջ ներառում են՝ մալուխներ, ամրացման համար անհրաժեշտ պարագաներ՝ պտուտակ, բոլտ, շայբա, մալուխների համար նախատեսված ամրակներ, անհրաժեշտության դեպքում կոնստրուկցիաների՝ ոտնակի կամ այլ հարմարանքի պատրաստում, տեղադրման վայրի GPS կորդինատի տեղորոշում, տեղադրված էլեկտրաշչակի լուսանկարում 2-3 հատ	

Պատվիրատուի ներկայացուցիչը ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պահանջի պարտավորվել է ներկայացնել թե որոնք են այդ սարքերը, որոնք բավարարում են տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացնել տեղեկատվություն, թե ուսումնասիրության արդյունքում ինչպես են հավաստվել, որ այդ սարքերը կարող են համակցվել ՀՀ ԱԻՆ-ում տեղադրված սերվերին, սակայն չի ներկայացրել:

Այսինքն՝ Պատվիրատուն որևէ կերպ չի հիմնավորել նման տեխնիկական բնութագրով սարքի գոյություն ունենալու փաստը:

Ինչպես նաև հարկ եմ համարում ընդգծել, որ Ընթացակարգի հրավերով ներկայացված գնման առարկայի համար սահմանված տեխնիկական բնութագրի ուսումնասիրության արդյունքում հնարավոր չէ պարզել թե ինչ սերվեր է տեղադրված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում, որպիսի պայմաններում միայն հնարավոր կլինեն ներկայացնել այնպիսի սարք, որը կարող էր համակցվել այդ սերվերին:

Այսպիսով՝ վերոգրյալ փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Պատվիրատուն գնման առարկայի տեխնիկական բնութագիրն այս կերպ սահմանելով՝ արհեստականորեն սահմանափակել է հնարավոր մասնակիցների շրջանակը և նրանց միջև մրցակցության հնարավորությունը՝ արդյունքում խախտելով Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջները, ինչպես նաև՝ Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է գնման առարկայի համար սահմանված տեխնիկական բնութագրին՝ տեղադրման և կարգաբերման մասով, ապա գտնում եմ, որ այն ներկայացված է ոչ հստակ և չի բխում Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՍՕՍ սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից 10.11.2021թ. ներկայացված բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

«Ձ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

«Ձ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ